

լաց իւրոց, զայդպիսի զձեր զբանդագուշանաց¹ բանս՝ իւր իսկ լսել, թող թէ եւ յականջս² այսպիսի իմաստուն եւ խորհրդական մարդոց լսելի առնել. բայց այսբան միայն՝ զի առաւել եւս ծանիցի ձեր յիմարութեանդ նշաւականք, եւ ի մեզ զաւրացեալ հաստատեսցի ճշմարիտ եւ աստուածուսոյց քարոզութեանն մերոյ անշարժութիւնն»:

ԾԷ. Եւ սրտմտեալ անաւրէն երեցունց իշխանացն, ոչ եւս առ ի յերկարսն հանդուրժել կարացեալ սրբոցն, որպէս շնորհ առնելով թագաւորին ընդ այնչափ թշնամանելոյ զնա՝ յարուցեալ ինքնին Վեհդենշապուհ³ առաջի գործակցաց իւրոց՝ հարկանէր տուերաւ զուս սրբոյ եպիսկոպոսին Սահակայ, եւ հուպ ի գաւտին մերձեցուցանէր զվերսն. եւ սրբոյ եպիսկոպոսին ի սաստիկ հարմանէն դրդուեալ՝ ոչ զլորեալ անկանէր յերկիր, այլ ի քարի մի յեցեալ հաստատէր. եւ որպէս ի բերանոյ ամենայն սրբոցն սկսաւ ասել այսպէս. «Գոհանամք զքէն, Զրիստոս, որ բազում անգամ կենդանարար գառնդ անմահական զենամար մատակարարեալ անծախութեամբ բաշխեցար ի ձեռաց մերոց. իսկ արդ եւ զմեզ իսկ մարդասիրապէս արարեալ զենումն՝ ընկալ՝ զամենեսեանս արժանաւորապէս զպատարագեալսս՝ ի հոտ անուշից»:

² Եւ ասացեալ սրբոյ եպիսկոպոսին այսպէս, թեպէտ եւ յորդեալ հոսէին վտակք արեանն ի վիրէ սրբոյն՝ սակայն կայր զաւրացեալ ուժով շնորհաւք հզաւրին, որպէս զի բնաւ չիցէ վիրաւորեալ:

³ Եւ ապա հրամայէին զսուրբ⁵ կաթողիկոսն զՅովսէփ գլխատել սրով. եւ մերկացուցեալ դահճացն զսուրբն՝ ասաց երիցս. *Դա՛րձ անձն իմ ի հող եւ ի հանգիստ քո, զի Տէր բարի արար քեզ»*. Եւ այսպէս ընկալաւ սրով զվախճան կատարելութեանն:

⁴ Իսկ յաղագս սրբոյն Ղեւոնդի հրաման ետուն դահճացն անաւրէն իշխանքն՝ մերկացուցանել զսուրբն եւ քարշել ուժգին ընդ քարաժեռ կոպճուտ տեղիս լանջակողմանցն: ⁵ Եւ այնպէս քարշեցին յերկար ժամս, մինչեւ զամենայն մարմինս սրբոյն, եւ զլանջացն⁶ եւ զթիկանցն, քանցեալ քերեցին ի մորթոյն, մինչեւ ոսկերացն մերկանալ ի մորթոյն. վասն զի զերանելի այրն Աստուծոյ զՂեւոնդ առաւելագոյն ասէին ամենայն Պարսիկք խրատատու եւ պատճառ լինել ամենայն իրացն Վարդանայ եւ գործոցն՝ որ ի ժամանակին յայնմ գործեցան յաշխարհիս Հայոց: ⁶ Եւ մինչդեռ կեսքն ի դահճացն քար-

1 SS. բանդագուշանաց

2 SS. թող թէ յականջս

3 Ձ. լուսանցքում նոր գլխի նշան՝ «

4 Ձ. լուսանցքում նոր գլխի նշան՝ «

5 SS. եւ զսուրբ

Սաղմ. ԾԺԴ 7

6 SS. սրբոյն զլանջացն